

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԵՍՊԱՆ ԴԱՎԻԹ ՊԵԼԵԳԻՆ

Հունվարի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իսրայելի արտաքին գործերի նախարարության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի բաժանմունքի փոխտնօրեն, դեսպան Դավիթ Պելեգին՝ ՀՀ ԱԳՆ փոխնախարար Ռուբեն Շուգարյանի և Հայաստանում Իսրայելի դեսպան Ռիվկա Կոհենի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց աշխարհում և մասնավորապես Ս. Երկրում խաղաղության հաստատման խնդիրների շուրջ և նշվեց կրոնական պետերի կարևոր դերակատարությունն այս հարցում:

Վեհափառ Հայրապետը միաժամանակ գոհունակություն հայտնեց երկու երկրների միջև առկա հարաբերությունների առնչությամբ՝ ընդգծելով, որ դրանց զարգացմանն իրենց նպաստն են բերում նաև հայ և հրեա համայնքները: Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտնեց, որ Իսրայելի իշխանությունները, ընդառաջելով Ամենայն Հայոց Հայրապետի, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության և բազմաթիվ այլ դիմումներին, ըստ այդմ վճռեցին պատրիարքությանը պատկան Պարոն Տեր կալվածքի խնդիրը՝ չանտեսելով պատրիարքության իրավունքներն ու շահերը: